Քաղվածք
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Բաժնետերերի Տարեկան Ժողովի
29.04.2014թ. N 2
Արձանագրությունից

ք. Երևան
ժ.11.00
/Երևանի ժամանակով/

Ներկա էր Ընկերության թվով 35 000 (100%) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերով միակ բաժնետեր Վիտալի Սարգսի Գրիգորյանցը:

Ժողովի նախագահող՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Վիտալի Գրիգորյանց, քարտուղար՝ Անի Ստեփանյան:

ՕՐԱԿԱՐԳ.

1. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատման, տարեկան շահութաբաժինների վճարման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցով՝

ԼՍԵՑԻՆ.

Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատման, տարեկան շահութաբաժինների վճարման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման վերաբերյալ հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ 2013 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, այդ թվում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ 2013 թվականի տարեկան հաշվեկշիռը 2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, շահույթների և վնասների բաշխումը:
2. 2013 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարել:
3. Ստացված 1 890 690 000 (մեկ միլիարդ ութ հարյուր իննսուն միլիոն վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ գումար զուտ շահույթը (հարկերի վճարումից հետո մնացած), բաշխել հետևյալ կերպ՝
   ա) կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում նշված գումարի 5 տոկոսի՝ 94 534 500 (իննսունչորս միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով.
   բ) մնացած 1 796 155 500 (մեկ միլիարդ յոթ հարյուր իննսունվեց միլիոն մեկ հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով գումարը ուղղել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի ընթացքում այլ հարցեր չեղան:
Օրակարգի հարցերի սպառման պատճառով՝ ժողովը հայտարարվեց փակված:

Ժողովի նախագահ՝ Վ. Գրիգորյանց
Ժողովի քարտուղար՝ Ա. Ստեփանյան
Խորհրդի քարտուղար՝ Ա. Ստեփանյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար՝ Մ. Ստեփանյան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ